ԴԺՎԱՐ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

FACTOR

FACTOR TV 2026

RA, Yerevan, 12 Saryan str.
E-mail: info@factor.am
Web: www.factor.am
© All Rights Reserved

Դժվար իրավիճակներում աշխատող լրագրողների ֆիզիկական անվտանգության քաղաքականություն Factor.am-ի խմբագրակազմի համար

2

Հավատարիմ մնալով անաչառ և բազմակողմանի լրագրության սկզբունքներին, պատասխանատու գործատուի ուղենիշին, կարևորելով մեդիա աշխատողներիդժվարին աշխատանքը՝ Factor.am-ն ընդունում է Լրագրողների անվտանգության սույն քաղաքականությունը կից հավելվածներով. (այսուհետ՝ Քաղաքականություն) ռազմական հակամարտությունների, զինված բախումների և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ լրագրողների և մյուս մեդիա աշխատողների գործունեությունը գրագետ և անվտանգ կազմակերպելու նպատակով:

Կից հավելվածները (արձանագրություններ, հարցաթերթիկներ, ստուգաթերթեր, հրահանգներ, այլ փաստաթղթեր) «Լրագրողների անվտանգության քաղաքականության» անբաժանելի մասն են, ևFactor.am-ի բոլոր աշխատակիցների համարպարտադիր է դրանց կատարումն՝ առանց բացառությունների:

Ընդունելով սույն Քաղաքականությունը՝Factor.am-ը սահմանում է աշխատակազմի առողջության և անվտանգության պահպանման առաջնահերթությունը, պարտավորվում է միջոցառումներ ձեռնարկել աշխատանքի ընթացքում աշխատակիցներին կանխատեսելի ռիսկերից պաշտպանելու համար:

Որպես բարեխիղճ և պատասխանատու գործատու Factor.am-ը կարևորում էաշխատակիցներին նախազգուշացնելը, թե ինչ դժվարություններ և ռիսկեր կարող են ի հայտ գալ արտակարգ իրավիճակներում մասնագիտական գործունեությունիրականացնելիս:

Սույն Քաղաքականությունը ի ցույց է դնում Factor.am-ի՝ աշխատակիցներին աջակցելու և պաշտպանելու հանձնառությունը՝ ողջամտությանսահմաններում: Factor.am-ըպարտավորվում է հնարավորինս ջանքեր գործադրել՝ աշխատանքին առնչվող կանխատեսելի ռիսկերը հայտնաբերելու, դրանք աշխատակիցներին ներկայացնելու ևհամատեղ խելամիտ որոշում կայացնելու համար:

Ընդունելով սույն Քաղաքականությունը՝ միաժամանակ Factor.am-ը տեղեկացնում էաշխատակիցներին, որ Հանձնառությունների լիարժեք կատարումը կախված է նրանցից յուրաքանչյուրի կամքից, թե որքանով նրանք կհետևեն և կկատարեն սույն փաստաթղթով և կից հավելվածներով ամրագրված դրույթները:

Աշխատակիցները ընդունում են ի գիտություն, որ Գործատուն չի կարող անել ավելին, քան թույլ են տալիս իր ռեսուրսներն ու կարողությունները, պայմանագրային պարտավորությունները:

Կյանքի գերակայություն ցանկացած իրավիճակում

Factor.am-ի համար առաջնայինը աշխատակիցների անվտանգությունն ու բարեկեցությունն է: Ցանկացած իրավիճակում կյանքը պահպանելը թիվ մեկ պայմանն է: Factor.am-ի աշխատակիցներն ու խմբագրության հետ համագործակցող ֆրիլանսերներն ընդունում են ի գիտություն, որ մարդկային կյանքն ամենաարժեքավորն է. նույնիսկ լավագույն հրապարակման համար սեփական կամ ուրիշի կյանքը վտանգելն անընդունելի է: Factor.am-ի խմբագիրների համար առաջին հերթին կարևոր է լրագրողների անվտանգությունը, այլ ոչ թե ռիսկային պայմաններում լուսաբանված նյութի դիտելիությունն ու մրցակիցներից առաջ անցնելը:

Ազատ կամք և հրաժարվելու իրավունք

Թե Հայաստանի տարածքում, թե սահմաններից դուրս ռազմական գործողությունների գոտի աշխատակիցը գործուղվում է կանխատեսելի ռիսկերի մանրակրկիտ գնահատումից հետո: Լրագրողի ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով նրա փորձառությունն ու պատրաստվածությունը: Ռիսկերի գնահատումից հետո լրագրողը կարող է հրաժարվել առաջադրանքի կատարումից՝ առանց մտավախության, որ դա բացասական հետեւանք կունենա իր աշխատանքային հետագա գործունեության համար:

Տեղում լուսաբանող աշխատակիցները ցանկացած պահի կարող են ընդհատել հանձնարարության կատարումը՝ իրավիճակի փոփոխության, հետագա աշխատանքը կյանքի համար խիստ վտանգավոր համարելու պահից սկսած՝ այդ մասին տեղեկացնելով խմբագրին: Մյուս կողմից, Factor.am-ը իրավասու է ցանկացած պահի նկարահանող խմբին հետ կանչել վտանգավոր գոտուց, խումբն առանց հապաղելու պետք է ենթարկվի հրահանգին: Եթե աշխատակիցը հրաժարվում է լքել վտանգավոր տարածքը, Factor.am-ը այդ պահից նրան համարում է աշխատանքից կամովին ազատված:

Տեղեկատվության հավաքագրումը

Factor.am-ը իրավասու է հավաքել և պահպանել ցանկացած անձնական տեղեկատվություն, որն անհրաժեշտ էխմբագրության և աշխատակիցների անվտանգությունն ապահովելու համար: Փաստաթղթերը կարող են պարունակել տեղեկություններ ճգնաժամային կառավարման համակարգի, կազմակերպչական միջոցառումների, անվտանգության տեխնիկական սարքավորումների, տրանսպորտի, կապի, ինչպես նաև ռիսկերի գնահատման եւ միջադեպերի մասին հաղորդումների վերաբերյալ:

Բարձր ռիսկային միջավայրերում աշխատանքը կազմակերպելու նպատակով հավաքագրված տեղեկատվությունը կարող է ներառել տվյալներ աշխատակիցների առողջության, պատվաստումների, արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանավորման վերաբերյալ: Factor.am-ը այստեղեկատվությունը պահպանում է՝ արտակարգ իրավիճակում հայտնված աշխատակցին անհապաղ աջակցելու նպատակով:

Պաշտպանական միջոցներ

Factor.am-ը, ըստ անհրաժեշտության և իր հնարավորությունների սահմաններում, լրագրողներին տրամադրում է անվտանգության ապահովման արդյունավետ և ժամանակակից սարքավորումներ, այդ թվում՝ առնվազն4-րդ դասի պաշտպանության զրահաբաճկոններ, սաղավարտներ, հեռախոսակապ: Լրագրողներից յուրաքանչյուրին տրամադրվում է անհատական տակտիկական դեղատուփ: Factor.am-ի լրագրողների և օպերատորների համար պաշտպանական անհատական միջոցների եւ դեղատուփի օգտագործման իմացությունը պարտադիր է:

Ուսուցում

Տնօրինությունը պետք է հետամուտ լինի, որ գործուղվող աշխատակիցները տեղեկացված լինեն բարձր ռիսկայնության գոտում իրավիճակի ու պայմանների մասին, ծանոթ լինեն զինված հակամարտությունների ընթացքում միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների նորմերին: Լրագրողները նույնպեսկրում են պատասխանատվություն՝ այս տեղեկատվությանը տիրապետելու հարցում:

Խմբագրության բոլոր աշխատակիցները, մինչ ռիսկային տարածք մեկնելը, անցնում են թեժ կետերում աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ ուսուցում,գնահատում են կանխատեսելի ռիսկերը: Ուսուցումը ներառում է թվային անվտանգությունը, համացանցում տեղեկատվահոգեբանական հարձակումները չեզոքացնելը, առաջին օգնության ցուցաբերումը, ռազմական, բնական և տեխնածին վտանգների դեպքումպաշտպանությունը:

Ռիսկերի մասին զգուշացում

Խմբագրությունը փորձում է հնարավորինս գնահատել կանխատեսելի ռիսկերը՝ մինչ լրագրողին բարձր ռիսկայնությամբ վայր գործուղելը: Խմբագրությունը հաշվի է առնում, որաշխատակիցը կարող է բախվելխնդիրների՝ պայմանավորված այլ գործոններով, ինչպիսիք են՝ սեռը, կրոնական, էթնիկ պատկանելությունը, սեռային կողմնորոշումը. հետևաբար, ռիսկերը գնահատվում են նաև այդ տեսանկյունից, անհրաժեշտության պարագայում էլ ձեռնարկվում են նախազգուշական քայլեր:

Գործողությունների պլան՝արտակարգ իրավիճակների ժամանակ

Factor.am-ի բոլոր աշխատակիցները պետք է ծանոթ լինեն հակամարտության գոտում աշխատանքի եւ/ կամ տարհանման պլանին, ներառյալ՝ հանդիպման ժամի և տեղի, սարքավորումների և տեխնիկայի տեղափոխման մասին տեղեկատվությանը, կոմունիկացիայի անվտանգ միջոցներին, արտակարգ իրավիճակում աշխատողներից յուրաքանչյուրի գործառույթին:

Գաղտնի տեղեկատվություն

Լրագրողները պարտավորվում են երբեքորևէ մեկին չփոխանցել գաղտնի տեղեկությունները, սոցիալական հարթակների անձնական կամ մասնագիտական էջերում չհրապարակել իրենց, գործընկերներին,աղբյուրներին վերաբերողտեղեկատվություն, խուսափել այնպիսի բովանդակության հրապարակումից, որը կարող է վտանգել իրենց, կամգործընկերներին:

Ապահովագրություն և հոգեբանական օգնություն

Խմբագրությունը հնարավոր ջանքերը կգործադրի, որպեսզի ռիսկային միջավայրում աշխատող լրագրողները, ներառյալ ֆրիլանսերները, կարողանան ձեռք բերել ապահովագրություն, որը կծածկի վնասվածքները, տարհանումը եւ մահը: Միեւնույն ժամանակ՝ Factor.am-ը ընդգծում է, որ օրենքով սահմանվածից ավելին չի կարող անել ապահովագրական ընկերությունների հետ բանակցելիս:

Աշխատակիցների ցանկությամբ՝ Factor.am-ը իր հնարավորությունների սահմաններում կաջակցի և կկազմակերպի հոգեբանական անհատական խորհրդատվություններ նրանց համար, ովքեր աշխատել են վտանգավոր պայմաններում, ենթարկվել հոգեբանական տրավմայի:

Factor.am-ը պարտավորվում է արտակարգ պատահարների դեպքում անմիջապես տեղյակ պահել աշխատակցի ընտանիքին՝ տրամադրելով լիարժեք տեղեկատվություն:

Զենքի կրման արգելք և զինված պահակազոր

Լրագրողները դիտորդներ են: Խմբագրության որևէ ներկայացուցիչ աշխատանքային պարտականությունների կատարմանընթացքում չի կարող զենք կրել:

Հնարավոր են այնպիսի իրավիճակներ, որ Factor.am-ըհարկադրված լինի վարձել երրորդ անձի՝ խիստ անհրաժեշտության դեպքում լրագրողների համար զինված պաշտպանություն ապահովելու նպատակով:

Գույք և սարքավորումներ (վնաս, կորուստ, գողություն)

Աշխատակիցը չպետք է անհարկի վտանգի ենթարկի իր կամ ուրիշների կյանքը՝ արտակարգ իրավիճակներում Factor.am-ի գույքը պաշտպանելու համար: Այնուամենայնիվ, բոլոր այն իրավիճակներում, երբ պայմանները թույլ են տալիս, Factor.am-ը աշխատակիցներից ակնկալում է պատշաճ ջանասիրություն և հոգատարություն՝ կազմակերպության կողմից իրենց վստահված գույքի և սարքավորումների նկատմամբ: Նման դեպքերը դառնում են առանձին քննության առարկա:

Factor.am-ը պատասխանատվություն չի կրում աշխատակցի անձնական ունեցվածքիկորստի, գողության կամ վնասի համար: Թե գործուղման ընթացքում ինչ անձնական իրեր պետք է ունենան իրենց մոտ, աշխատակիցները որոշում են անձամբ: Ենթադրվում է, որ աշխատակիցները ուղևորության ընթացքում պետքէ լինեն զգույշ և ուշադիր՝ թե սեփական, թե Factor.am-ի ունեցվածքի նկատմամբ:

Անվտանգության քաղաքականությանը հետևելը

Ակնկալվում է, որ Factor.am-ի բոլոր աշխատակիցները կհետևեն անվտանգության կանոններին՝ առանց բացառությունների: Factor.am-ը հիշեցնում է՝ հնարավոր չէ բոլոր իրավիճակները նախօրոք լիարժեք գնահատելև հրահանգներ տալ, ուստի չկանխատեսվածիրավիճակներում անձնակազմը պետք է առաջնորդվի ողջամտությամբ, որոշումներ կայացնի՝ հանուն բոլոր աշխատակիցների անվտանգության:

RA, Yerevan, 12 Saryan str.
E-mail: info@factor.am
Web: www.factor.am
© All Rights Reserved

Հավելված 1.
Հարցաթերթիկ՝ պատերազմ, մարտական գործողություններ, ռազմական հակամարտություններ, զինված բախումներ լուսաբանող լրագրողների/մեդիաշխատողների համար

ԳԱՂՏՆԻ

(Հարցաթերթիկը լրացվում է գործողությունների գոտի մեկնելուց առաջ)

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Անուն/ազգանուն/հայրանուն
2. Ծննդյան ամսաթիվ
3. Անձնագրային տվյալներ (կցել անձնագրի պատճենը)
4. Լրագրողական վկայականի համարը (կցել պատճենը)
5. Հասցե
6. Հեռախոսահամար
7. Էլ. փոստ
8. Մեսինջերներ / Facebook, WhatsApp, Viber, Signal և այլն)
9. Կոնտակտային անձ

ա. Անուն, ազգանուն
բ. Հեռախոսահամար և էլ. փոստ
գ. Ազգակցական կապը լրագրողի հետ (ծնող, հարազատ, ամուսին, ընկեր և այլն)

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

10. Արյան խումբ
11. Քրոնիկ հիվանդություններ
12. Ալերգիա
13. Պատվաստումներ մարմնի վրա նշան/ տատու

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14. Բնակավայրըև երթուղին
15. Տրանսպորտային միջոցը
16. Գործուղման նախնական տևողությունը
17. Տեխնիկական միջոցներ
18 Ֆինանսական միջոցներ
19. Խմբագիրների հետ շփման միջոցները և հաճախականությունը
20. Պայմանական նշաններ և արտահայտություններ՝ արտակարգ իրավիճակների ժամանակ կապ հաստատելու նպատակով

Անուն/ Ազգանուն/ ստորագրություն
Լրացման ամսաթիվը և վայրը

Հավելված 2.
Ռիսկերի գնահատման ստուգաթերթ

Ռիսկերի գնահատման այս ձեւաթուղթը նախատեսված է լրագրողների (ֆրիլանսերների) եւ խմբագիրների համար, որոնք իրականացնում են պլանավորում՝ առաջադրանքն իրականացնելուց առաջ: Լրագրողը խմբագիրների, գործընկերների հետ հնարավորինսմանրամասն գնահատում է կարիքները, կանխատեսելի ռիսկերը, կանխարգելիչ քայլերը: Լրացված ստուգաթերթը պատճենահանվում է մի քանի օրինակով եւ պահվումլրագրողի, խմբագրի, ինչպես նաեւ կոնտակտային անձի մոտ:

Ստուգաթերթը, որը մշակվել է «Լրագրողների պաշտպանության կոմիտե» միջազգային կազմակերպության կողմից, համարվում է լավագույններից մեկը ռիսկերի գնահատման տեսանկյունից: Կախված առաջադրանքի բնույթից՝ երբեմն կարող է չլինել ձեւաթղթի որոշ տողեր լրացնելու անհրաժեշտություն:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Առաջադրանքի նկարագրություն

Վայրը, աշխարհագրությունը

Ժամանակացույց
(Նշել ամսաթվերը, գործուղման ընթացքում բնակության հասցեն, տրանսպորտը, օր.՝ չվերթների համարները)

ԱԱՀ (ստեղծագործական խմբի բոլոր անդամների տվյալները՝ հեռախոսահամար, էլ. հասցե)

Կոնտակտային անձ՝ արտակարգ դեպքերի համար (ստեղծագործական խմբի անդամներից յուրաքանչյուրի համար առանձին՝ ԱԱՀ, հեռախոսահամար, ազգակցական կապը)

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

(Նկարագրել կանխատեսելի ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ հանձնարարությունը կատարելու ընթացքում կամ հրապարակումից հետո: Նշել ռիսկերը նվազագույնի հասցնելու տարբերակները)

- Արդյոք հաշվի առել եք ռիսկի ծավալը՝ կապված կոնֆլիկտի ու բռնության հետ: Ինչպե՞ս եք ծրագրում նվազեցնել այդ ռիսկը:

- Արդյոք կա ահաբեկչության վտանգ, որտեղ մեկնում եք: Ինչպե՞ս եք պատրաստվում նվազեցնել այդ ռիսկը:

- Արդյոք հաշվի առել եք ռիսկի ծավալը՝ կապված կոնֆլիկտի ու բռնության հետ: Ինչպե՞ս եք ծրագրում նվազեցնել այդ ռիսկը:

- Արդյոք կա ահաբեկչության վտանգ, որտեղ մեկնում եք: Ինչպե՞ս եք պատրաստվում նվազեցնել այդ ռիսկը:

- Արդյոք հաշվի առել եք հանցագործությունների հետ կապված ռիսկերը, ներառյալ առեւանգելու վտանգը: Ինչպե՞ս եք նվազեցնելու այդ ռիսկը:

- Արդյոք գոյություն ունեն պոտենցիալ խնդիրներ՝ կապված լրագրողի /օպերատորի նախկինում իրականացրած լրագրողական աշխատանքի հետ: Կարո՞ղ են դրանք մեծացնել ռիսկը տվյալ լրագրողի կամ տեղծագործական խմբի անդամների համար: Ինչպե՞ս եք նվազեցնելու ռիսկը:

- Արդյոք կա համաճարակի կամ առողջության համար այլ վտանգ գործուղման վայրում: Ի՞նչ եք անելու ռիսկի մեղմացման համար:

- Արդյոք կա պոտենցիալ ռիսկ՝ բողոքի ակցիաների, միտինգների եւ զանգվածային անկարգությունների հետ կապված: Ինչպե՞ս եք ծրագրում մեղմել այդ ռիսկը:

- Արդյոք առաջադրանքի կատարման ընթացքում անհրաժեշտ են անհատական պաշտպանության միջոցներ, ինչպիսիք են զրահաբաճկոնը, սաղավարտը, առաջին օգնության դեղատուփը: Ո՞ր միջոցներից եք օգտվելու: Արդյո՞ք գործուղվող խմբի բոլոր անդամները գիտեն՝ ինչպես օգտվել դրանցից:

- Արդյոք կա ահաբեկման, ֆիզիկական եւ սեռական բնույթի սպառնալիքների ռիսկ: Ինչպե՞ս եք ծրագրում նվազեցնել այդ ռիսկերը:

- Արդյոք կա բերման ենթարկվելու կամ ձերբակալվելու վտանգ: Ինչպե՞ս եք ծրագրում նվազեցնել այդ ռիսկը:

- Արդյոք քննարկել եք տրանսպորտի հարցը, ի՞նչ միջոցներ եք ձեռնարկելու չնախատեսված իրավիճակներում՝ վթար, անսարքություն, եւ այլն:

- Արդյոք կան ռիսկեր՝ կապված կոռուպցիայի հետ: Ինչպե՞ս եք նվազեցնելու ռիսկը:

- Արդյոք կան եղանակային պայմանների եւ բնական աղետների հետ կապված ռիսկեր: Ինչպե՞ս եք ծրագրում մեղմացնել այդ ռիսկերը:

- Արդյոք նախկինում լրագրողներն ունեցել են խնդիրներ նմանատիպ պատմություն լուսաբանելիս: Եթե այո, նշեք՝ ինչպիսի եւ ինչ քայլեր եք ձեռնարկելու, որ նման ռիսկ չառաջանա:

ԹՎԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

(Նկարագրել թվային անվտանգությանն առնչվող կանխատեսելի ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ հանձնարարությունը կատարելու ընթացքում, հեռարձակումից կամ հրապարակումից հետո: Նշել ռիսկերը նվազագույնի հասցնելու տարբերակները:)

- Արդյոք կա օնլայն հարձակման ռիսկ՝ պատրաստվող նյութի հետ կապված: Ինչպե՞ս եք նվազեցնելու այն:
- Ստուգեք Ձեր օնլայն պրոֆիլները: Արդյոք կա՞ այնպիսի տեղեկատվություն, որը կարող է Ձեզ համար ռիսկային դառնալ առաջադրանքը կատարելիս: Մանրամասն նկարագրեք՝ ինչպես եք նվազեցնելու այդ ռիսկը:
- Արդյոք որոշել եք՝ ինչպես անվտանգ հաղորդակցվել աղբյուրների հետ: Ի՞նչ միջոցներ եք կիրառելու եւ ինչո՞ւ եք հենց դրանք ընտրել:
- Արդյոք ունեք տվյալների անվտանգ պատճենահանման եւ փոխանցման պլան: Մանրամասնեք՝ ինչպես է իրականացվելու:
- Մտածե՞լ եք՝ ինչպես եք անվտանգ իրականացնելու օնլայն հետաքննություն: Ինչ քայլեր եք իրականացնելու ռիսկը նվազեցնելու համար:
- Տեղյա՞կ եք՝ ինչպիսի տեղեկատվություն է պահվում Ձեր սարքավորումներում, եւ այն կարո՞ղ է Ձեզ համար ռիսկային դառնալ:
- Տեղյա՞կ եք ինչպես պետք է սահմանն անցնել, երբ պայուսակում սարքավորումներ են: Ի՞նչ քայլեր պետք է անել ռիսկի մեղմացման համար:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Նկարագրել կանխատեսելի հոգեբանական ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ խմբի անդամների մոտ գործուղման ընթացքում, հեռարձակումից կամ հրապարակումից հետո: Նշել՝ ինչպես եք նվազեցնելու ռիսկերը:

- Արդյոք հաշվի առել եք տվյալ պատմության հետ կապված հոգեբանական ռիսկերը՝ ներառյալ օնլայն ոտնձգություններն ու սպառնալիքները:
- Արդյոք ստեղծագործական խմբի բոլոր անդամների համար մշակել եք «Դեբրիֆինգ»-ի ծրագիր՝ առաջադրանքի կատարումից հետո իրականացնելու համար:
- Արդյոք ունեք պլան՝ ստեղծագործական խմբի անդամներին հոգեսոցիալական կամ հետտրավմատիկ աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այս բաժինն անհրաժեշտ է լրացնել հնարավորինս հանգամանալից:

- Արդյոք ունեք մշակված հաղորդակցման պլան՝ առաջադրանքը կատարողների ու նրանց առաջնային կոնտակտների միջեւ կանոնավոր կապ ապահովելու համար: Ունե՞ք հաստատված տագնապի ընթացակարգ:
- Մանրամասն նշել կապի դուրս գալու ժամը, միջոցը (հեռախոս, Signal. WhatsApp,Viber, SMS) եւ կոնտակտային անձի տվյալները: Նշել նկարահանող խմբի բոլոր անդամների հեռախոսահամարները:
- Տեղեկատվություն ապահովագրության վերաբերյալ (տեսակը, համարը, գործողության ժամկետը, աջակցության շուրջօրյա հեռախոսահամարը):
- Նշել արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսված այլ կոնտակտային տվյալներ:
- Մանրամասն նկարագրել՝ ինչ պետք է անել շտապ օգնություն ցուցաբերելու անհրաժեշտության դեպքում:
- Եթե հնարավոր է գրել փաստաբանների տվյալները, ում պետք է դիմել արտակարգ իրավիճակի դեպքում:
- Նշել ցանկացած այլ կարեւոր տեղեկատվություն:

Հավելված 3.
Անհատական տակտիկական դեղատուփ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝

1.Տուրնիկետ (CAT կամ SOFT) ոլորագոտի (լարան)՝ արյունահոսությունը ժամանակավորապես դադարեցնելու համար:

2.Հեմոստատիկ վիրակապ (արյունահոսությունը դադարեցնող բինտ). այն օգտագործվում է բաց վերքերը վիրակապելու համար:

3.Իսրայելական բանդաժ կամ ճնշումային վիրակապ ՝ 4-րդ կամ 6-րդ չափի:

4.Արհեստական շնչառության խողովակ (Էնդոշնչփողային):

5.Ծածկող (օկլյուզիվ) վիրակապ՝ HALO. օգտագործվում է կրծքավանդակի շրջանում վիրավորումների դեպքում:

6.Դեկոմպրեսիոն ասեղ՝ կրծքավանդակի շրջանում վիրավորումների ժամանակ թոքամզի խոռոչից օդի հեռացման համար:

7.Դեղորայք, որը պետք է խմել վիրավորվելուց անմիջապես հետո: Խորհուրդ է տրվում այն պայուսակում պահել առանձին տոպրակով կամ տուփով: Այն ներառում է ցավազրկող, հակաբորբոքային և հակաբիոտիկ դեղեր՝

- Դիկլոֆենակ նատրիում 75 մգ
- Պարացետամոլ 500 մգ
- Ցեֆտրիակսիոն 500մգ

8.Դեղորայք մարսողական խնդիրների, փորլուծության, թունավորման դեմ (օր՝. Մեզիմ/ Նարինե/ ակտիվացրած ածուխ, Իմոդիում և այլն):

9. Սպազմոլիտիկ, ցավազրկող դեղանյութեր (Նոշպա/ Ադվիլ/ Իբուպրոֆեն):

10. Ջերմիջեցնող, հակաբորբոքային դեղանյութեր՝ բժշկի նշանակմամբ:

11. Պանտենոլ՝ քսուք այրվածքների դեպքում:

12.Հակաայրվածքային հիդրոգելային վիրակապ:

13. Վիրակապանյութեր և անտիսեպտիկ լուծույթներ՝

- տարբեր լայնության բինտեր՝ ստերիլ և ոչ ստերիլ
- վերքերը փակող տարբեր չափսի կպչուն ժապավեններ (օր.՝ սանտավիկ)
- տարբեր չափսի բինտային տամպոններ և թանզիֆներ (օր.՝ 10 x 10 սմ,7,5 x 10 սմ)
- բամբակյա խծուծներ

- ալկոհոլային խծուծ
- բետադինի լուծույթ
- ստերիլ ֆիզլուծույթ (ֆլակոն կամ սրվակ)
- 3%-ոց ջրածնի պերօքսիդ
- աչքի կաթիլներ

14. Հիպալերգիկ կպչուն սպեղանի. ի տարբերություն հյուսվածքային հիմքով վիրակապերի, այն կարելի է հեշտությամբ կտրել ձեռքով, առանց մկրատի:

15. Հաբեր ջրի ախտահանման համար:

16. Միանգամյա օգտագործման բժշկական ձեռնոցներ:

17.Միջին չափսի պողպատե մկրատ՝ բութ ծայրով:

18.Ջերմակայուն ծածկոց:

19. Սեւ չջնջվող մարկեր, որով նշվում է տուրնիկետի/լարանի ամրացման ժամը, պացիենտին տրված դեղորայքը և լրացվում է զննման թերթիկը:

20. Պացիենտի զննման թերթիկ, որում նշվում են բոլոր այն գործողությունները, որոնք իրականացվել են մինչև հիվանդանոց տեղափոխելը:

21.Անջրանցիկ պայուսակ՝ անհետաձգելի օգնության դեղատուփի համար: Որքան շատ լինեն գրպանիկները, այնքան հեշտ և արագ կլինի անհրաժեշտ դեղորայքը գտնելը:

ՀԻՇԵՔ՝

- Դեղորայքը դուրս է գրվում բժշկի ցուցումով:
- Քրոնիկ հիվանդություններ ունեցողները պետք է վերցնեն ամենօրյա դեղերի բավարար քանակություն:
- Տուրնիկետը օգտագործվում է զարկերակային արյունահոսությունը դադարեցնելու համար:
- Կպչուն սպեղանին կիրառվում է մազանոթային արյունահոսությունը դադարեցնելու համար:
- Եռանկյունաձեւ վիրակապն օգտագործվում է մարմնի՝ կոտրված/ վնասված հատվածներն անշարժացնելու համար:

Հավելված 4.
Անհրաժեշտ իրերի ցանկ.Ինչ վերցնել մարտական գործողությունների գոտի մեկնելու ժամանակ

Անհրաժեշտ իրերի ցանկ, որոնք խորհուրդ է տրվում վերցնել մարտական գործողությունների գոտի/ գործուղման վայր մեկնելուց: Ցանկը կազմվում է ռիսկերի գնահատման և աշխատանքի պլանը կազմելու արդյունքում:

1.ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

- 4-րդ դասի պաշտպանության զրահաբաճկոն՝ մուգ, ցանկալի է կապույտ գույնի, որի տեքստիլ ճարմանդներին (липучка) գրված է PRESS տարբերանշանը (Քողարկանախշ՝ պաշտպանական գույնի (կամուֆլյաժ) բաճկոն խորհուրդ չի տրվում):
- Մուգ գույնի սաղավարտ՝ PRESS տարբերանշանով (Պաշտպանական գույնի (կամուֆլյաժ) սաղավարտ խորհուրդ չի տրվում):
- Առաջին օգնության դեղատուփ (պարունակությունը՝ առանձին հավելվածով. դեղատուփի օգտագործումը թույլատրվում է միայն համապատասխան թրեյնինգից հետո):

2.ԳՐՊԱՆՈՒՄ

- Պարանոցին կրել լամինացված քարտ, որի վրա նշված է արյան խումբը և ալերգիկ ռեակցիաները:
- Կանխիկ գումար (դրամ կամ արտարժույթ), որը պահվում է քսակում կամ գաղտնի գրպանում:
- Կեղծ դրամապանակ, որը կարող է հանձնել իրերն առգրավվելու պարագայում. այնտեղ պահել լուսանկարով գոնե մեկ փաստաթուղթ, որը հեշտությամբ կարելի է վերականգնել:
- Անձնագիր կամ ճամփորդական այլ փաստաթուղթ (նույնականացման քարտ), կանխարգելիչ պատվաստումների մասին վկայական, լրագրողի վկայական, վարորդական իրավունքի վկայական, զինվորական գրքույկ՝ առկայության դեպքում:
- Անձնագրի և մյուս փաստաթղթերի պատճենները՝ յուրաքանչյուրից երկու օրինակ. դրանք պետք է պահել տարբեր տեղերում:
- Անձնագրային՝ 35x45 մմ չափսի լուսանկարներ:

3. ՊԱՅՈՒՍԱԿՈՒՄ

- Բժշկի դուրս գրած դեղերը՝ բավարար քանակությամբ:
- Ակնաբույժի նշանակումով ակնոց կամ կոնտակտային ոսպնյակներ՝ մի քանի հատ:
- Լուծույթ և տարա՝ կոնտակտային ոսպնյակների համար:
- Արևային ակնոց:
- Բժշկական դիմակներ:
- Գրիչներ, նոթատետրեր:
- Բջջային հեռախոս (սմարթֆոնից բացի)՝ ցանկալի է կապի այլ օպերատորի քարտով:
- Նոթբուք՝ ըստ անհրաժեշտության:
- Լիցքավորման՝ տարբեր տեսակի սարքեր, մալուխներ:
- Պահեստային մարտկոցներ:
- Կողմնացույց:
- Կոնտակտային տեղեկատվությունը՝ պատճենված և լամինացված, մի քանի օրինակով՝ գործընկերների համար ևս (այն կարող է ներառել նաև ընտանիքի անդամների ԱԱՀ-ն, հեռախոսահամարները):
- Գործիքների բազմաֆունկցիոնալ հավաքածու (карманный набор):
- Բազմաֆունկցիոնալ դանակ:
- Արևապաշտպան քսուք:

4. ՈՒՍԱՊԱՐԿՈՒՄ

- Ջրի շիշ:
- Ջրի ախտահանիչ միջոց կամ ֆիլտր:
- Ձեռքի կամ գլխի լապտեր:
- Մարտկոցներ:
- Ադապտեր, մալուխներ, էլեկտրական երկարացման լար:

- Ականջակալներ:
- Անձրևանոց:
- Ծածկոց / տաք հագուստ:
- Գլխարկ:
- Ներքնաշոր:
- Չոր սնունդ, պահածոներ (պետական արտադրության), կիսաֆաբրիկատներ:
- Սրբիչ և լոգանքի պարագաներ:
- Ձեռքերի ախտահանիչ միջոց:
- Թաց անձեռոցիկ:
- Միջոց մոծակի, միջատների դեմ:
- Տաք գուլպա և ձեռնոց:
- Հակասնկային քսուք՝ ոտքերի համար:
- Պահպանակներ:
- Տամպոններ կամ միջադիրներ:
- Ցանց ճանճերի դեմ:
- Աղբի տոպրակներ:
- Լուցկի, կրակայրիչ, մոմ:
- Ռեզինե օղակներ (մազերի, փողի և այլնի համար):
- Պոլիէթիլենային տոպրակներ՝ ZIP փականով:
- Պարան կամ քուղ:
- Մեկուսիչ կամ այլ ամուր ժապավեն (ոչ կպչուն). изоляционная или иная прочная лента:
- Քնապարկեր, կարեմատ:

5.ՄԵՔԵՆԱՅՈՒՄ

- Ձեռքի լապտեր, երթեւեկության առկայծող փարոսիկ կամ վթարային լուսային ազդանշան:
- Անվտանգության բաճկոն՝ լուսարձակող ժապավենով:
- Քարտեզներ:
- Ծածկոցներ:
- Խմելու ջրի պաշար:
- Հիմնական գործիքներով տուփ:
- Պահեստային անվադող և դոմկրատ:

Հավելված 5.
Անվտանգության կանոնների ստուգման հարցաթերթիկ՝ ռիսկային պայմաններում առաջադրանքը կատարելուց առաջ

Խմբագիր

Լրագրող

Հանձնարարության վայրը

Ամսաթիվ

Արդյո՞ք լրագրողը համաձայն է ռիսկային/ ԱԻ պայմաններում իրականացնել առաջադրանքը:	ԱՅՈ	ՈՉ
Արդյո՞ք լրագրողն անցել է Ֆիզիկական անվտանգության դասընթաց:	ԱՅՈ	ՈՉ
Արդյո՞ք լրագրողն անցել է Առաջին օգնության դասընթաց:	ԱՅՈ	ՈՉ
Արդյո՞ք իրականացվել է հնարավոր ռիսկերի գնահատում *(Կցել ռիսկերի գնահատման հավելվածը)	ԱՅՈ	ՈՉ
Արդյո՞ք լրագրողը լրացրել է անձնական տվյալների անկետան: *(Կցել լրացված անկետան)	ԱՅՈ	ՈՉ
Եթե լրագրողը աշխատելու է օպերատորի/ լուսանկարչի հետ, արդյո՞ք միասին եւ խմբագրի հետ քննարկել են գործողությունների պլանը:	ԱՅՈ	ՈՉ
Ի՞նչ տեխնիկա է նա օգտագործելու (համակարգիչ, հեռախոս, տեսախցիկ եւ այլն)	ԱՅՈ	ՈՉ
Արդյո՞ք լրագրողն ունի բժշկական կամ կյանքի ապահովագրություն: *(Եթե այո, կցել կրկնօրինակը)	ԱՅՈ	ՈՉ

Լրագրող (անուն, ազգանուն, ստորագրություն)

Պատասխանատու անձ (անուն, ազգանուն, ստորագրություն)

Վայր, ամսաթիվ